ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ԳՀՇՁԲ-2021/2-1

ք. Երևան «08» 11 2021 թ.

Առողջապահության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գրիգորյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2,206,300 (երկու միլիոն երկու հարյուր վեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Առողջապահության նախարարություն Կառավարական տուն 3 ՓՆ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՀ 900011018885 ՀՎՀՀ 02507171	<<Ֆլեշ Մոտորս>>ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց 31 «Արարատբանկ» ԲԲԸ ՀՀ 1510012745550100 ՀՎՀՀ 00873228 Էլ. Փոստ՝ tendera@garaj.am Հեռ.055/ 46 54 56
_____ (ստորագրություն) Կ.Տ.	_____ Ա. Գասպարյան (անունը, ազգանունը) (ստորագրություն) Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«08» 12 2021 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/2-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
րավե րով նախա տեսվ ած չափա ւաժնի համա րը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը*
1	50111130/6	Տոյոտա Լենդ Քրուզեր LC 150 2.7 GAS ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություն	Կցվում է հավելվածով	դրամ	400,000	1	ք. Երևան, Կառավարության տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը
2	50111130/7	Հունդայ Սանտա Ֆե 3.3, Հունդայ Սանտա Ֆե 2.4, Հունդայ Տուսոն IX 35 2.4 և Հունդայ Տուսոն IX 35 2.4 ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն		դրամ	1,206,300	1		
3	50111130/4	Սուզուկի SX4 S-CROSS 1.6 ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություն		դրամ	200,000	1		
4	50111130/5	Նիսսան Սենթրա 1.8 և Նիսսան Սաննի 1.5 ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն		դրամ	400,000	1		

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Առողջապահության նախարարություն
Կառավարական տուն 3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018885
ՀՎՀՀ 02507171

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Ֆլեշ Մոտորս>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյանց 31
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228
Էլ. Փոստ. tendera@garaj.am
Հեռ/055/ 46 54 56

Ա.Ա. Գասպարյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված

1. Տեխնիկական բնութագիր

Հ/Հ	Ծառայության անվանումը	1-ին չափաբաժնի (Տոյոտա Լենդ Քրուզեր LC 150 2.7 GAS արտադրություն՝ 2015թ., Տոյոտա LC 150 4.0 GAS արտադրություն՝ 2018թ.) միավորի առավելագույն գին, ՀՀ դրամ	2-րդ չափաբաժնի (Հունդայ Սանտա Ֆե 3.3, արտադրություն՝ 2014թ., Հունդայ Սանտա Ֆե 2.4, արտադրություն՝ 2014թ., Հունդայ Տուսոն IX 35 2.4, արտադրություն՝ 2012թ., Հունդայ Տուսոն IX 35 2.4, արտադրություն՝ 2007թ., Հյունդայ Էլանտրա 1.6, արտադրություն՝ 2008թ.) միավորի առավելագույն գին, ՀՀ դրամ	3-րդ չափաբաժնի (Սուզուկի SX4 S-CROSS 1.6 մակնիշի, արտադրություն՝ 2015թ.) միավորի առավելագույն գին, ՀՀ դրամ	4-րդ չափաբաժնի (Նիսսան Սենթրա 1.8, Նիսսան Սաննի 1.5 (2 հատ)) միավորի առավելագույն գին, ՀՀ դրամ
	I. Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները				
1	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1,600.0	1,600.0	1,600.0	1,635.3
2	Քաշիխ տուփի աշխատանքի ստուգում	1,600.0	1,600.0	1,600.0	0.0
3	ABS համակարգի ստուգում	1,600.0	1,600.0	1,600.0	1,635.3
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1,600.0	1,600.0	1,600.0	1,635.3
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1,600.0	1,600.0	1,600.0	1,635.3
	1.Շարժիչ	0.0	0.0	0.0	0.0
6	Շարժիչի հանում և տեղադրում	40,000.0	40,000.0	40,000.0	36,793.8
7	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	80,000.0	80,000.0	60,000.0	61,323.0
8	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	60,000.0	60,000.0	56,000.0	57,234.8
9	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	60,000.0	60,000.0	56,000.0	57,234.8
10	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	60,000.0	60,000.0	56,000.0	57,234.8
11	Փականների խցակների փոխարինում 1 կ-տ	60,000.0	60,000.0	56,000.0	57,234.8
12	Հրիչների կամ հիդրոտիրիչների փոխարինում 1 կ-տ	60,000.0	60,000.0	56,000.0	57,234.8
13	Շարժիչի մխոցասոյների, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	88,000.0	88,000.0	40,000.0	40,882.0
14	Ծնկաձև լիսեռի փոխարինում	88,000.0	88,000.0	60,000.0	61,323.0
15	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	88,000.0	88,000.0	56,000.0	57,234.8
16	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	88,000.0	88,000.0	56,000.0	57,234.8
17	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
18	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	36,000.0	36,000.0	32,000.0	32,705.6
19	Շարժիչի բլոկի փոխարինում	80,000.0	80,000.0	64,000.0	65,411.2
20	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	24,000.0	24,000.0	24,000.0	24,529.2
21	Մխոցի փոխարինում 1 հատ	24,000.0	24,000.0	24,000.0	24,529.2
22	Քաշիխ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
23	Քաշիխ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
24	Քաշիխ լիսեռի խառաբուկի փոխարինում	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
25	Շարժիչի շղթայի փոխարինում	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
26	Շարժիչի վանոսների փոխարինում	70,000.0	70,000.0	64,000.0	65,411.2
27	Շարժիչի քարտեղի փոխարինում, միջադիրի փոխարինումով	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
28	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
29	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
30	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
31	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
32	Շարժիչի կափույրի փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
33	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
34	Մխոցամատի փոխարինում	22,400.0	22,400.0	20,000.0	20,441.0
35	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	88,000.0	88,000.0	80,000.0	81,764.0
36	Սուխարիկ փոխարինում	40,000.0	40,000.0	36,000.0	36,793.8
37	Շարժիչի փոկի հեռավակի փոխարինում	4,000.0	4,000.0	3,200.0	3,270.6
38	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	40,000.0	40,000.0	36,000.0	36,793.8
39	Շարժիչի յուղի պահեքսափիչի իրանի փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
40	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
41	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	70,000.0	70,000.0	60,000.0	61,323.0
42	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	40,000.0	40,000.0	20,000.0	20,441.0
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	0.0	0.0	0.0	0.0
43	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	0.0	0.0	0.0	0.0
44	Ավտոմեքենայի յուղում	1,600.0	1,600.0	1,600.0	1,635.3
45	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	1,600.0	1,600.0	1,600.0	1,635.3
46	Յուղի զտիչի փականի փոխարինում	0.0	0.0	0.0	0.0
47	Ադրաածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
48	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
49	Ադրաածման կալեկտորի միջադիրի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
50	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	1,226.5
51	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
52	Վառելիքի ճնշք մաքրման զտիչի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
53	Օդի զտիչի փոխարինում	0.0	0.0	0.0	0.0
54	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	0.0	0.0	0.0	0.0
55	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
56	Օդի ծախսաչափիչի փաղրակի հանում և տեղադրում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
57	Օդի զտիչի փաղրակի հանում և տեղադրում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
58	Օդաքաշի փաղրակի հանում և տեղադրում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
59	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000.0	20,000.0	16,000.0	32,705.6
60	Ինժեկտորի բոցամուղների փոխարինում 1 կ-տ	8,000.0	8,000.0	6,800.0	6,949.9
61	Ինժեկտորի բոցամուղների մաքրում	8,000.0	8,000.0	6,800.0	6,949.9
62	Ինժեկտորի բոցամուղի խառաբուկների փոխարինում	8,000.0	8,000.0	6,800.0	6,949.9
63	Բենզամղիչի փոխարինում	6,000.0	6,000.0	2,800.0	2,861.7
64	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	6,000.0	6,000.0	2,800.0	2,861.7
65	Վառելաճնշքի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8

66	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	32,000.0	32,000.0	28,000.0	28,617.4
67	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
68	Վառելիքի բաքի մաքրում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
69	Արագաարի ոտնակի փոխարինում	4,000.0	4,000.0	3,600.0	3,679.4
70	Արագաարի ոտնակի տվիչի փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
71	Օդի ծախսի տվիչի փոխարինում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
72	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
73	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2,800.0	2,800.0	2,400.0	2,452.9
74	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	6,000.0	6,000.0	3,200.0	3,270.6
75	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	6,000.0	6,000.0	3,200.0	3,270.6
76	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
	3. Սառեցման և արտածման համակարգ	0.0	0.0	0.0	0.0
77	Հովհարի փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
78	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000.0	4,000.0	3,200.0	3,270.6
79	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
80	Շերտափեղկի փոխարինում	24,000.0	24,000.0	16,000.0	16,352.8
81	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	24,000.0	24,000.0	16,000.0	12,264.6
82	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000.0	8,000.0	8,000.0	8,176.4
83	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	14,000.0	14,000.0	12,000.0	8,176.4
84	Ընդարձակող բաքի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
85	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	0.0	0.0	0.0	0.0
86	Հովացման համակարգի ռետիճե փողրակի փոխարինում	8,000.0	8,000.0	6,000.0	4,088.2
87	Հովհարի թևաճիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	4,000.0	4,088.2
88	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
89	Վառարանի շարժիչի փոխարինում	6,000.0	6,000.0	6,000.0	6,132.3
90	Թերմոստատի փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
91	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
92	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
93	Գեներատորի փոկի փոխարինում	4,000.0	4,000.0	3,200.0	3,270.6
94	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	6,000.0	6,000.0	6,000.0	6,132.3
95	Թերմոստատի միջադիրի փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
96	Սառեցման համակարգի օդահանում	4,000.0	4,000.0	3,600.0	3,679.4
97	Խլաբարի գոֆրայի փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
98	Խլաբարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	4,000.0	4,000.0	3,600.0	3,679.4
99	Խլաբարի հանում և տեղադրում կամ փոխարինում	16,000.0	16,000.0	12,000.0	12,264.6
100	Խլաբարի 1 հատ խողովակի փոխարինում	2,800.0	2,800.0	2,400.0	2,452.9
101	Խլաբարի անուրի (хамут) փոխարինում	3,200.0	3,200.0	2,000.0	2,044.1
102	Խլաբարի ճեղքերի փոխարինում	3,200.0	3,200.0	3,200.0	3,270.6
103	Խլաբարի կախոցի փոխարինում	2,000.0	2,000.0	1,600.0	1,635.3
104	Ռեզոնատորի փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
105	Հովացման հեղուկի փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	0.0	0.0	0.0	0.0
106	ՓՏ-ի առջևի խառաբուկի փոխարինում	40,000.0	40,000.0	40,000.0	40,882.0
107	ՓՏ-ի հետևի խառաբուկի փոխարինում	22,000.0	22,000.0	8,000.0	8,176.4
108	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	48,000.0	48,000.0	40,000.0	40,882.0
109	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	64,000.0	64,000.0	56,000.0	57,234.8
110	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
111	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
112	ՓՏ-ի յուղի փոխարինում	2,800.0	2,800.0	2,000.0	2,044.1
113	ԱՓՏ-ի հիմնական ճորտում, ներառյալ բոլոր աշխատանքները	120,000.0	120,000.0	80,000.0	81,764.0
114	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում	100,000.0	100,000.0	80,000.0	81,764.0
115	ԱՓՏ-ի փոխարինում	60,000.0	60,000.0	40,000.0	40,882.0
116	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	60,000.0	60,000.0	48,000.0	49,058.4
117	ԱՓՏ-ի սոլենոիդների փոխարինում	20,000.0	20,000.0	20,000.0	20,441.0
118	ԱՓՏ-ի համակարգչի և սոլենոիդների փոխարինում	44,000.0	44,000.0	40,000.0	40,882.0
119	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	56,000.0	56,000.0	50,000.0	51,102.5
120	ԱՓՏ-ի յուղի մղիչի խառաբուկերի փոխարինում	56,000.0	56,000.0	50,000.0	51,102.5
121	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	8,000.0	8,000.0	6,000.0	6,132.3
122	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	4,800.0	4,800.0	4,000.0	4,088.2
123	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	4,800.0	4,800.0	4,000.0	4,088.2
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	0.0	0.0	0.0	0.0
124	Բաշխիչ տուփի հիմնական ճորտում, ներառյալ բոլոր աշխատանքները	70,000.0	70,000.0	40,000.0	0.0
125	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	42,000.0	42,000.0	24,000.0	0.0
126	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում	70,000.0	70,000.0	40,000.0	0.0
	6. Առջևի և հետևի կամրջակներ	0.0	0.0	0.0	0.0
127	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	28,000.0	28,000.0	16,000.0	0.0
128	Առջևի կամրջակի կիսաառնո հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	3,200.0	0.0
129	Առջևի կամրջակի կիսաառնո առանցքակալի փոխարինում	8,000.0	8,000.0	4,800.0	0.0
130	Առջևի կամրջակի կիսաառնո առանցքակալի խառաբուկերի փոխարինում	8,000.0	8,000.0	4,800.0	0.0
131	Կամրջակի յուղի փոխարինում	4,000.0	4,000.0	2,400.0	0.0
132	Առջևի կամրջակի բռունցքի գնդածև հենասրանի հանում և տեղադրում կամ փոխսարինում	4,000.0	4,000.0	3,200.0	0.0
133	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	52,000.0	52,000.0	24,000.0	0.0
134	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխսարինում	48,000.0	48,000.0	20,000.0	0.0
135	Հետևի կամրջակի կիսաառնո հանում և տեղադրում կամ փոխարինում	48,000.0	48,000.0	24,000.0	0.0
136	Հետևի կամրջակի կիսաառնո առանցքակալի փոխարինում	10,000.0	10,000.0	24,000.0	0.0
137	Հետևի կամրջակի կիսաառնո առանցքակալի խառաբուկերի փոխարինում	20,000.0	20,000.0	24,000.0	0.0
138	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	40,000.0	40,000.0	24,000.0	0.0
139	Կամրջակի տվիչի փոխարինում	6,000.0	6,000.0	4,000.0	0.0
140	Կամրջակի իրանի փոխարինում	52,000.0	52,000.0	32,000.0	0.0
141	Կամրջակի յուղի փոխաիրինում	4,000.0	4,000.0	2,400.0	0.0

	7. Կախոց	0.0	0.0	0.0	0.0
142	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	0.0	0.0	0.0	40,882.0
143	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,400.0	2,400.0	2,000.0	2,044.1
144	Առջևի անվակռճղի առանցքակալի փոխարինում	8,000.0	8,000.0	6,000.0	6,132.3
145	Առջևի անվակռճղի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000.0	8,000.0	6,000.0	6,132.3
146	Հետևի անվակռճղի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000.0	20,000.0	8,000.0	8,176.4
147	Հետևի անվակռճղի առանցքակալի փոխարինում	16,000.0	16,000.0	8,000.0	8,176.4
148	Առջևի զսպանակի փոխարինում	6,000.0	6,000.0	4,000.0	4,088.2
149	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	4,000.0	4,088.2
150	Պենդոցնցամեղմիչի փոխարինում	7,200.0	7,200.0	4,000.0	4,088.2
151	Պենդոցնցամեղմիչի բարձիկների փոխարինում	6,000.0	6,000.0	3,200.0	3,270.6
152	Նեթրևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	6,000.0	6,132.3
153	Նեթրևի լծակի վոռոնների փոխարինում 1 հատ	14,000.0	14,000.0	8,000.0	8,176.4
154	Անիվների պաշտպանիչի փոխարինում	2,000.0	2,000.0	1,200.0	1,226.5
155	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	2,000.0	2,000.0	1,200.0	1,226.5
156	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
157	Գնդե հողակապի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
158	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000.0	8,000.0	8,000.0	8,176.4
159	Առջևի կայունարարի վոռոնների փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
160	Առջևի կայունարարի կալուճակի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
161	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
162	Հետևի կախոցի անվադոցքի կարգավորում	4,000.0	4,000.0	3,200.0	3,270.6
163	Հետևի կայունարարի վոռոնների փոխարինում 1 հատ	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
164	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
165	Հետևի կայունարարի կալուճակի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
166	Հետևի զսպանակների փոխարինում	6,000.0	6,000.0	4,400.0	4,497.0
167	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000.0	4,000.0	3,600.0	3,679.4
168	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7,200.0	7,200.0	6,000.0	6,132.3
169	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	6,000.0	6,000.0	4,400.0	6,132.3
	8. Ղեկային մեխանիզմ	0.0	0.0	0.0	0.0
170	Ղեկասյունակի (կալոնկա) հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	20,000.0	20,000.0	9,600.0	9,811.7
171	Ղեկասյունակի խաչուկի փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
172	Ղեկասյունակի վերանորոգման հավաքածուի փոխարինում	18,000.0	18,000.0	10,000.0	10,220.5
173	Ղեկասյունակի քանդում, ապատավորում, հավաքում	18,000.0	18,000.0	10,000.0	0.0
174	Ղեկասյունակի կարգավորում	1,600.0	1,600.0	800.0	817.6
175	Ղեկային մեխանիզմի ագրեգատի փոխարինում	4,000.0	4,000.0	2,400.0	2,044.1
176	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
177	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածուի փոխարինում	6,800.0	6,800.0	6,000.0	6,132.3
178	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
179	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	16,800.0	16,800.0	16,000.0	16,352.8
180	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառանցքման մեխանիզմի փոխարինում	32,000.0	32,000.0	20,000.0	20,441.0
181	Ղեկային կալուճի ձգանների փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
182	Ղեկային կալուճի միջին ձգանի փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
183	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
184	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	8,000.0	8,000.0	4,800.0	0.0
185	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	16,000.0	16,000.0	9,600.0	0.0
186	Հիդրոուժեղարարի փակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000.0	4,000.0	2,000.0	0.0
187	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	8,000.0	8,000.0	4,800.0	0.0
188	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	6,800.0	6,800.0	4,000.0	0.0
189	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	18,000.0	18,000.0	9,600.0	0.0
190	Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000.0	2,000.0	1,200.0	1,226.5
191	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	4,000.0	4,088.2
192	Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում	2,400.0	2,400.0	1,200.0	2,044.1
193	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	4,800.0	4,800.0	2,400.0	2,452.9
	9. Արգելակային համակարգ	0.0	0.0	0.0	0.0
194	Վակումային ուժեղարարի փոխարինում	14,000.0	14,000.0	12,000.0	12,264.6
195	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
196	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	32,000.0	32,000.0	20,000.0	20,441.0
197	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	6,000.0	6,132.3
198	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	6,000.0	6,132.3
199	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000.0	8,000.0	6,000.0	6,132.3
200	Առջևի սուպպորտի վերանորոգում	8,000.0	8,000.0	8,000.0	8,176.4
201	Հետևի սուպպորտի վերանորոգում	6,000.0	6,000.0	8,000.0	8,176.4
202	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
203	Արգելակային փողրակի փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
204	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	2,000.0	2,000.0	1,600.0	1,635.3
205	Արգելակային համակարգի օդաճնում	7,200.0	7,200.0	4,000.0	4,088.2
206	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	2,000.0	2,000.0	1,600.0	1,635.3
207	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
208	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
209	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	4,800.0	4,800.0	4,000.0	4,088.2
210	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում 1հատ	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
211	Հետևի արգելակային սկավառակի հղկում 1հատ	4,800.0	4,800.0	4,000.0	4,088.2
212	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
213	ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում	60,000.0	60,000.0	50,000.0	51,102.5
214	ABS-ի տվիչի փոխարինում	2,800.0	2,800.0	2,800.0	2,861.7
215	ABS-ի էլեկտրական հաղորդալարերի փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
216	Ջեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2
217	Ջեռքի արգելակի կոճղակների փոխարինում	4,000.0	4,000.0	4,000.0	4,088.2

218	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000.0	8,000.0	8,000.0	8,176.4
219	Հետևի արգելակների կարգավորում	2,000.0	2,000.0	1,200.0	1,226.5
220	Արգելակային հեղուկի փոխարինում	6,000.0	6,000.0	4,000.0	4,088.2
	10. Էլեկտրասարքավորում	0.0	0.0	0.0	0.0
221	Գեներատորի հանում,տեղադրում կամ փոխարինում	14,000.0	14,000.0	7,200.0	7,358.8
222	Գեներատորի քանդում և աբատավորում, հավաքում	14,000.0	14,000.0	12,000.0	12,264.6
223	Մեկնարկիչի քանդում և աբատավորում, հավաքում	16,000.0	16,000.0	14,800.0	15,126.3
224	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,600.0	1,600.0	1,200.0	1,226.5
225	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
226	Հակաձուշային լապտերի տեղադրում	2,000.0	2,000.0	1,600.0	1,635.3
227	Լապտերի կենտրոնական փոխակերպիչի փոխարինում	8,000.0	8,000.0	7,200.0	7,358.8
228	Սարքերի պանելի հանում և տեղադրում	48,000.0	48,000.0	36,000.0	36,793.8
229	Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	2,000.0	2,000.0	2,000.0	2,044.1
230	Թրթկման կողպեքի հանում և տեղադրում	12,000.0	12,000.0	12,000.0	15,126.3
231	Թրթկման կողպեքի հպակի փոխարինում	12,000.0	12,000.0	12,000.0	15,126.3
232	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	2,000.0	2,000.0	1,200.0	1,226.5
233	Վազքաչափի փոխարինում	6,000.0	6,000.0	4,800.0	4,905.8
